Հայաստանում Պատվերների հանձնման կետերի

վերանորոգման և ձևավորման ձեռնարկ

wildberries

v. №2 սո 5.06.2026

Ցանկանո՞ւմ եք բացել պատվերների հանձնման սեփական կետը

Այս ձեռնարկում մանրամասն ներկայացնում ենք վերանորոգման յուրաքանչյուր փուլը, առաջարկում ենք պատրաստի նմուշներ և խորհուրդ տալիս, թե ինչպես հանձնման կետը դարձնել առավել գրավիչ՝ մեծ թվով հաճախորդների համար

Բովանդակություն

Փաստաթղթի մասին

Բովանդակություն 03

Մուտքի հատված

Անելիքների ցանկ 06
Ի՞նչ է ներառվում մուտքային խմբում 07
Մուտքային խումբը երեկոյան ժամերին 08
Հիմնական և լրացուցիչ բրենդավորում 09
Ցուցանակների տեսակներ 10
Պահպանության ենթակա դաշտեր 15
Որտեղ տեղադրել ցուցանակը 16
Աշխատանքային ժամերի ցուցանակ 19
Մուտքի դռան վրա փակցվող պիտակներ 22
Ուղղորդող նշաններ 24
Պատվերների հանձնման կետի (ՊՀԿ) մուտք 26

Հատակագծում

Ինչպե՞ս կատարել տարածքի գոտիավորում 32
Պատվերների հանձնման կետի հատակագիծ 33
Ի՞նչ է ներառվում հաճախորդային գոտում 34
Հիմնական և լրացուցիչ հատվածներ 35
Աշխատանքային տարածք 37
Սպասասրա 40
Հանդերձարանների հատված 43
Ապրանքների ստուգման հատված 46
Մանկական հատված 49
Ի՞նչ է ներառված պահեստային տարածքում 52
Հիմնական և լրացուցիչ տարածքներ 53
Պատվերների պահպանման տարածք 54
Պահեստի աշխատանքային հատված 57
Սանհանգույց 60

Վերանորոգում

Գործողությունների հաջորդականություն 65
Տարածքի վերլուծություն 66
Միջնապատերի կառուցում 68
Էլեկտրական հաղորդալարերի տեղադրում 73
Հատակի ծածկ 77
Ներկի գույնը 84
Առաստաղ 85
Պատերի հարդարում 88
Վարդակներ 92
Լուսավորության համակարգ 97
Տեսահսկման համակարգ 102
Օդորակման համակարգ 105
Ջեռուցման համակարգ 108
Դռներ 110
Հակահրդեհային անվտանգություն 113

Կահույք

Կահույք և սարքավորում 118
Հիմնական և լրացուցիչ կահույք 119
Մենեջերի սեղան 120
Պատվերների հանձնման սեղան 122
Ապրանքների զննման սեղան 125
Հանդերձարաններ 127
Նստարան 130
Հայելի 132
Աղբարկղ 133
Պահեստի կահույք և սարքավորումներ 134

Տեքստիլ

Տեքստիլի բազային հավաքածու 143

Բրենդավորում

Ինչպե՞ս իրականացնել հանձնման կետի արտաքին ձևավորումը 144
Բրենդավորման հիմնական և լրացուցիչ տարրեր 145
Բրենդավորված պատ 146
Պաստառ 150
Կահույքի երեսպատման տարրեր 152

տեղեկատվական նյութեր

Տեղեկատվական նյութերի հիմնական փաթեթ 162
Իրազեկում տեսահսկման վերաբերյալ 163
Պատի տեղեկատվական վահանակներ 165
Սեղանի ցուցանակ 167
Հաճախորդի անկյուն 169

Մուտքային խումբ

հանձնման կետը դարձնենք գրավիչ և նկատվող

01 Ցուցանակ՝
02 Աշխատանքային ժամերի աղյուսակ
03 Դռան վրա փակցվող պիտակներ
04 Ուղղություն
05 Հանձնման կետի մուտք


wildberries
10:00
22:00
ամեն օր
wildberries
10:00–22:00
ամեն օր

Անելիքների ցանկ

1

Համաձայնեցնել կառուցվածքների տեղադրումը

2

Տեղադրել ցուցանակը և աղյուսակը

3

Ավելացնել տեղեկություններ պարունակող պիտակները

4

Մտածել մինչև հանձնման կետ հասնելու ճանապարհը և ուղղությունը

5

Կարգի բերել մուտքի մոտ տարածքը

6

Տեղադրել էլեկտրոնային կողպեք և հսկիչ

Ի՞նչ է ներառվում մուտքային խմբում

1. Ցուցանակ
2.Աշխատանքային ժամերի աղյուսակ
3.Աշխատանքային ժամերի պիտակ
4. Պիտակ «Դեպի դուրս» կամ «Դեպի ներս»


Մեզ մոտ գործում են ձևավորման միասնական պահանջներ. խնդրում ենք հետևել Ապրանքանիշի ոճի և տեխնիկական բնութագրերի չափանիշներին



Մուտքային խումբը երեկոյան ժամերին

1. Ցուցանակ

Երեկոյան ժամերին կետը պետք է ունենա այս տեսքը: Համոզվեք, որ ցուցանակը միացված է թե ցերեկային, և թե երեկոյան ժամերին



Հիմնական և լրացուցիչ բրենդավորում

Հիմնական տարրեր են հանդիսանում այն տարրերը, որոնք պարտադիր պետք է լինեն Շենքի արտաքին մասում: Լրացուցիչ տարրերը կարելի է ներառել ըստ ցանկության



Հիմնական տարրեր.

1. Ցուցանակ
2. Աշխատանքային ժամերը
3. Դռան վրա փակցվող պիտակներ



Լրացուցիչ տարրեր.

1. Ուղղության ցուցանակներ

Նախքան մոնտաժումը համոզվեք, որ ձեր տարածաշրջանում ցուցանակների Տեղադրման կանոնները պահպանվում են: Նաև համաձայնեցրեք տեղադրումը տարածքը վարձակալության հանձնողի և Երևանում արտաքին ձևավորման և գովազդի հարցերը համակարգող մարմնի հետ: Այլ քաղաքներում ևս ցուցանակի տեղադրումը անհրաժեշտ է համաձայնեցնել տեղական մարմինների հետ

Ցուցանակ

Տեսնել բոլոր ցուցանակները

Ընտրեք ցուցանակի տարբերակ, որը համապատասխանում է ձեր խանութի ճակատային մասին




Խոշոր լուսավորվող տառեր Հիմնակմախքի վրա

Սա նախընտրելի տարբերակ է: Ընտրեք այն, եթե ճակատային մասում գտնվող հարևան ցուցանակները ուղղանկյուն հիմքեր չունեն




Խոշոր սպիտակ լուսավորվող տառեր Հիմնակմախքի վրա

Կհամապատասխանի, եթե գունավոր տառերը խախտում են Ձևավորման կանոնակարգը կամ եթե ցուցանակը վատ է ընթերցվում
մուգ գույնի ճակատային մասի վրա



Փոքր տարբերակ գունավոր


Եթե մեծ ցուցանակը լայնությամբ չի տեղավորվում ճակատային մասում, տեղադրեք փոքր տարբերակը:



Փոքր տարբերակ սպիտակ

Եթե փոքր ցուցանակի գունավոր տարբերակը խախտում է Ձևավորման կանոնակարգը, օգտագործեք սպիտակ տարբերակը

Ծավալային լուսային տառեր՝ ենթաշրջանակի վրա



Ստանդարտ ցուցանակ՝

30×164 սմ



Լրացուցիչ չափսեր այն դեպքերի համար, երբ առկա է ցուցանակի բարձրության սահմանափակում


25×136,7 սմ
20×109,3 սմ,
15×82 սմ

Ծավալային սպիտակ լուսային տառեր՝ ենթաշրջանակի վրա



Ստանդարտ ցուցանակ՝

30×195 սմ



Լրացուցիչ չափսեր այն դեպքերի համար, երբ առկա է ցուցանակի բարձրության սահմանափակում


25×162,5 սմ
20×130 սմ,
15×97,5 սմ

Փոքր տարբերակ՝ գունավոր



Ստանդարտ ցուցանակ


30×49,6 սմ



Լրացուցիչ չափսեր այն դեպքերի համար, երբ ցուցանակի բարձրության հետ կապված սահմանափակումներ կան


25×41,3 սմ
20×33 սմ
15×24,8 սմ

Փոքր տարբերակ՝ սպիտակ



Փոքր տարբերակ

30×54 սմ




Լրացուցիչ չափսեր այն դեպքերի համար, երբ ցուցանակի բարձրության հետ կապված սահմանափակումներ կան

25×45,4 սմ
20×36 սմ
15×27 սմ

Պահպանման գոտիներ

դիտել ձեր ցուցանակի համար չափսը

Տարբերանշանի շուրջն անհրաժեշտ է թողնել ազատ տարածություն՝ պահպանության դաշտեր:
Որքան ավելի շատ «օդ» է մնում, այնքան ավելի շահեկան տեսք է ստանում ցուցանակը



Պահպանության դաշտի համար հաշվի առեք 2 կողմնորոշիչ. b կամ d տառերի շրջագիծը և փոքրատառ i-ի կետը


1. Պահպանության նվազագույն դաշտը.

ցուցանակի ստորին հատվածից մինչև տարբերանշանի բազային գիծը, ինչպես նաև մեծատառերի վերին հատվածից մինչև ցուցանակի վերևի հատվածն ընկած ուղղահայաց հեռավորությունը (i տառի կետի չափը)


2. Խորհուրդ տրվող պահպանության դաշտը.

ցուցանակի ստորին հատվածից մինչև տարբերանշանի բազային գիծը (b տառի շրջագիծը): Մեծատառերի վերին հատվածից մինչև ցուցանակի վերևի հատվածն ընկած հեռավորությունը (i տառի կետի չափը)

Ցուցանակը շինության ճակատին



Ցուցանակի կենտրոնական առանցքը. ծածկի գծի վրա՝ 1-ին և 2-րդ հարկերի միջև կամ գծից ցած: Եթե ճակատային մասում կան այլ ցուցանակներ, ձերը տեղադրեք նրանց հետ միևնույն մակարդակում



Ցուցանակը պետք է գտնվի հանձնման կետի տարածքի սահմաններում: Այն պետք է գտնվի դռան շրջանակից, պատուհաններից կամ ցուցափեղկերից ոչ պակաս, քան 15 սմ հեռավորության վրա

Ցուցանակը ծոփորի վրա

Եթե շինության ճակատին ծոփոր կա, տեղադրեք ցուցանակը բացառապես դրա սահմաններում:


Ծավալային տառերի բարձրությունը չպետք է գերազանցի ծոփորի բարձրության 70%-ը



Ցուցանակը՝ ցոկոլային հարկում գտնվող տարածքի վրա

Ցոկոլային հարկում ՊՀԿ-ի ցուցանակը կարելի է տեղադրել պատուհաններից վերև: Խնդրում ենք կատարել օրենսդրական պահանջները

— ցուցանակի ստորին եզրից մինչև գետինը՝ նվազագույնը 600 մմ,
— ցուցանակի առավելագույնը բարձրությունը՝ 300 մմ,
— ցուցանակը պետք է կախված լինի հանձնման կետի տարածքի սահմաններում



Աշխատանքային ժամերի տեղեկատվական ցուցանակ


Տարբերանշանով և աշխատանքային ռեժիմով աղյուսակ



Չափսը՝ 40×40 սմ


ներբեռնել նմուշը

Որտեղ տեղադրել աշխատանքային ռեժիմով աղյուսակը




Դռնից ձախ՝ հատակից 165 սմ բարձրության վրա:

Դռան բացվածքից հաշվարկեք 20 սմ հետ



Եթե դռնից մինչև պատուհան հեռավորությունը 50 սմ-ից ավելի է և 80 սմ-ից պակաս, տեղադրեք աղյուսակը դրանց ճիշտ մեջտեղը:

Եթե 50 սմ-ից պակաս է, ապա՝ դռնից աջ




Դռնից աջ՝ աչքերի մակարդակում և հատակից 165 սմ բարձրության վրա:


Դռան բացվածքից հաշվարկեք 20 սմ

* Լարանցումը նախընտրելի է թաքցնել: Եթե չստացվի, օգտագործեք մալուխային կանալ: Կատարեք էլեկտրական լարանցման նկատմամբ կիրառվող պահանջները: Լուսավորումը պետք է աշխատի շուրջօրյա ռեժիմում

Ինչպես անել չի՛ կարելի



Դռանը չափազանց մոտ




Աչքերի մակարդակից բարձր կամ ցածր

Մուտքի դռան ինքնակպչուն ցուցանակներ

1. Աշխատանքի ռեժիմը.
չափսը՝ 30×30 սմ

2. Դռան ուղղությունը.
չափսը՝ 5×10 սմ

ներբեռնել նմուշները




Որտեղ և ինչպես տեղադրել

Փակցրեք ստիկերը ապակե դռանը: Պիտակի կենտրոնը պետ ք է լինի հատակից 165 սմ բարձրության վրա՝ նույն մակարդակում ինչ աղյուսակի կենտրոնը:

«Դեպի ձեզ» և «Դեպի ներս» պիտակները՝ բռնակին ավելի մոտ՝ 120 սմ բարձրության վրա:

Չմոռանաք ճարպազերծել մակերեսը



Ուղղորդող նշաններ

Եթե հանձնման կետը գտնելը բարդ է, գտեք, թե բանուկ հատվածներից, օրինակ՝ կանգառներից կամ առևտրի կենտրոններից, մտածեք, թե ինչպես են հասնելու հաճախորդները:

Հնարավորության դեպքում, շինության ճակատին տեղադրեք ցուցանակներ, եթե մուտքը բակի կողմից է կամ շենքի կողային ճակատից

տարբերակներ՝

Աղյուսակ

Փողոցի կամ ոչ ապակյա մակերեսի համար հարմար է ՈւՄ տպագրությամբ, ՊԷՏ-ից կամ ակրիլից աղյուսակը

Պիտակ

Ֆոն ունեցող հակադարձ տպագրությամբ պիտակը ՝Wildberries-ի ֆիրմային գույներով հարմար է ապակե մակերեսների համար

ներբեռնել նմուշները




Որտեղ և ինչպես տեղադրել

Հանձնման կետի ուղղությամբ՝ աչքերի մակարդակում՝ հատակից 165 սմ բարձրությամբ:

Եթե ընտրել եք պատուհանների և դռների միջև հատվածը, տեղադրեք աղյուսակը կենտրոնում՝ բացվածքների միջև:

Եթե ստիկերը ցանկանում եք փակցնել ցուցափեղկի վրա, ապա այդ դեպքում ևս տեղադրեք այն կենտրոնում:

Մոնտաժեք նույն կերպ, ինչ աշխատանքային ռեժիմի աղյուսակը



Նախքան մոնտաժումն սկսելը չմոռանաք համաձայնեցնել նավիգացիան

Պատվերների հանձնման կետի (ՊՀԿ) մուտք

Գնորդները կարևորում են, թե ինչ տեսք ունի հանձնման կետը դրսից:

Մուտքը պետք է լինի մաքուր և կոկիկ: Թեթև կոսմետիկ վերանորոգում արեք, եթե ճակատը կոկիկ տեսք չունի:

Եթե լուրջ փոփոխություններ անելու մտադրություն ունեք, համոզվեք, որ պահպանում եք պատկան մարմինների պահանջները



Ինտերիեր

ներքին հարդարանքը՝ հատակագծից մինչև բրենդավորում

01 Հատակագծում
02 Վերանորոգում
03 Կահույք և սարքավորում
04 Բրենդավորում


wildberries
wildberries
-30%

Անելիքների ցանկ

1

Մշակել
հատակագիծը

2

Կատարել մինիմալ
վերանորոգում

3

Պատվիրել կահույք
և լրամասեր

4

Դասավորել
կահույքը

5

Բրենդավորել
տարածքը

6

Լրացնել
և ուղարկել հայտը

Հատակագծում


բաշխում ենք մակերեսները, որպեսզի հանձնման կետը հարմար լինի

01 Հաճախորդային գոտու հատակագծում
02 Պահեստի հատակագծում



Ինչպես կատարել տարածքի գոտիավորում

պահեստ



հաճախորդային գոտի

Հարաբերակցություն 50/50
Մակերես 36–50 մ²


պահեստ



հաճախորդային գոտի

Հարաբերակցություն 60/40
Մակերես 40–70 մ²

պահեստ




հաճախորդային գոտի

Հարաբերակցություն 70/30
Մակերես 60–120 մ²

Պատվերների հանձնման կետի (ՊՀԿ) հատակագիծ


1



Կիսում ենք տարածքը.

— պահեստի համար հատկացրեք առնվազն 50% մակերես, իսկ ավելի լավ է՝ 60–70%
— հաճախորդային գոտուն՝ 30–50%
— կազմակերպեք դեպի պահեստ անցումը


2



Մշակում ենք հաճախորդային գոտին.

— աշխատանքային գոտի
— ստուգման գոտի
— հանդերձարանների գոտի
— սպասման գոտի
— մանկական գոտի


3



Բաշխում ենք դետալները.

— հանձնման սեղան
— ստուգման սեղաններ
— հանդերձարաններ
— նստարաններ, աղբարկղեր և հայելի
— մանկական անկյուն

4





Կազմակերպում ենք պահեստը.

— պահման գոտի
— զուգարան
— սեղան

Ի՞նչ է ներառվում հաճախորդների սպասարկման հատվածում







— Աշխատանքային գոտի

— Հանդերձարանների գոտի


— Ստուգման գոտի


— Սպասման գոտի

— Մանկական գոտի

Հիմնական և լրացուցիչ հատվածներ

Հիմնական գոտիներն անհրաժեշտ են յուրաքանչյուր հանձնման կետում, իսկ լրացուցիչները կարելի է կազմակերպել ըստ ցանկության:
Սպասման գոտին և մանկական անկյունը կօգնեն գրավել ավելի մեծ թվով գնորդներ





Հիմնական գոտիները.

— Աշխատանքային գոտի

— Հանդերձարանների գոտի


— Ստուգման գոտի

Լրացուցիչ գոտիները՝

— Սպասման գոտի


— Մանկական գոտի

Ինչպես է բաշխվում հաճախորդների հոսքը




Սցենար 1

Գնորդը մոտենում է սեղանին, ստանում է պատվերը, հեռանում է




Սցենար 2

Գնորդը ստուգում է պատվերը ապրանքների ստուգման սեղանի վրա



Սցենար 3

Գնորդը փորձում է իրերը. անհրաժեշտ է պայուսակների և իրերի համար տեղ



Սցենար 4

Երեխաները գնում են խաղերի համար հատկացված գոտի, սպասում են ծնողներին և միասին հեռանում են


Աշխատանքային տարածք





Մենեջերի սեղանը բաժանում է
պահեստը հաճախորդային գոտուց


Աշխատանքային գոտի՝ հատակագծում



Պատի մոտ, պահեստի մուտքի կողքը




Պատի մոտ, պահեստի մուտքի առջև




Պատերից հեռու, պահեստի մուտքի դիմաց

Աշխատանքային գոտի. կահույք




Կահույքի հիմնական հավաքածու.

— մենեջերի սեղան
— բազկաթոռ
— հանձնման սեղան



Ընտրեք հարմար համադրությունը

Ամեն ինչ կախված է
հատակագծից,
ծանրաբեռնվածությունից
և մենեջերների թվից



Որտեղ դնել սեղանը.

1. Մուտքի դիմաց, որպեսզի մենեջերը դիմավորի հաճախորդներին
2. Պահեստին մոտ
3. Պատից առնվազն 100 սմ հեռու

Սպասման տարածք




Հանձնման կետում ամենակարևոր գոտիներից մեկը. դարձրեք այն հաճախորդների համար առավել հարմարավետ



Կահույքի հիմնական հավաքածու. նստարաններ, աղբարկղ, հայելի

Սպասման գոտի՝ հատակագծում


Պիկ ժամերին կարող են գոյանալ հերթեր: Տեղադրեք նստարաններ, որպեսզի հաճախորդները կարողանան նստել կամ ձեռքից ցած դնել ծանր պայուսակները



Պատվերը ստանալու և հանդերձարանի հերթերի ընդհանուր գոտի




Սպասման գոտում հերթերը բաժանվում են 2 մասի՝ պատվերը ստանալու և հանդերձարանի սպասողների




Սպասման 2 առանձին գոտի՝ պատվերը ստանալու և հանդերձարանի սպասողների համար

Սպասման գոտի՝ կահույք



Հիմնական հավաքածու.

— հայելի
— նստարան
— աղբարկղ



Անպետք տուփը տեղափոխեք աղբարկղ. այդպես ավելի հեշտ կլինի հեռացնել աղբը: Մենք աղբարկղերը մշակել ենք այնպես, որ դրանցում տեղավորվեն ստանդարտ տուփերը



Տեղադրեք նստարանները և աղբարկղերը հանձնման սեղանին մոտեցող հերթի երկայնքով: Կողքը անցնելու տեղ թողեք 135 սմ լայնությամբ: Կախեք հայելիները հանձնման սեղանի մոտ և հանդերձարանների գոտում


Հանդերձարանների հատված





Եթե հատակագծով հնարավոր է, հանձնման գոտի և հանդերձարանները ցանկալի է տարանջատել: Այդկերպ հերթում կանգնած գնորդները չեն բախվի նրանց, ով արդեն փորձում է իրերը


Հանդերձարանների գոտի. հատակագծում



Շարքում 2 խցիկ



Շարքում 3 խցիկ



6 խցիկ՝ միմյանց դիմաց

Հանդերձարանների գոտի. կահույք




Ի՞նչ տեղադրել այստեղ.

— հանդերձարան և վարագույր
— լուսավորությամբ հայելի
— նստարան
— գորգիկ և կոշիկի հագնելաթի



Բոլոր հանդերձարանները ստանդարտ չափսերի են՝ 120×120×200 սմ



Տեղադրեք հանդերձարանները պատերի երկայնքով: Կողքը անցնելու համար տեղ թողեք նվազագույնը 100 սմ լայնությամբ: Ցանկալի է խցիկները տեղադրել այնպես, որ դրանք չփակեն պատուհանները, և հանձնման կետն ավելի լուսավոր լինի


Ապրանքների ստուգման հատված





Փորձել չպահանջող ապրանքները ստուգելու վայրը: Այստեղ գնորդները մյուս հաճախորդներին չեն խանգարի ստանալ պատվերները


Ստուգման գոտի. հատակագծում



Հանձնման սեղանի կողքին՝ տեսախցիկների տակ




Տեղ լինելու դեպքում տեղադրեք 2 սեղան, որպեսզի մի քանի հաճախորդ միաժամանակ կարողանա ստուգել ապրանքները



Հանդերձարաններից առանձին, որպեսզի հերթերը չխառնվեն

Ստուգման գոտի. կահույք



Հիմնական հավաքածու.

— ապրանքների ստուգման սեղան
— նստարան, եթե բավարար տեղ կա



Եթե դուք 2 սեղան ունեք, տեղադրեք դրանք շարքով կամ միմյանց հանդեպ մեջքով — այնպես, որ հաճախորդային գոտում կղզյակ ստացվի




Համադրություններից ցանկացածը տեղադրեք մենեջերի սեղանից 100–300 սմ հեռավորության վրա: Այդ և մյուս կահույքի միջև թողեք անցնելու տեղ նվազագույնը 100 սմ

Մանկական հատված




Փոքր երեխաների հետ եկող գնորդների հարմարավետության համար նախատեսեք մանկական գոտի

Մանկական գոտի. հատակագծում



Եթե տեղը քիչ է, մանկական գոտի կարելի է չանել





Ավելի մեծ տարածքով կետերում երեխաների համար գոտու կահույքը տեղադրեք հերթից հեռու՝ սպասման գոտում կամ հանդերձարանների մոտ

Մանկական գոտի. կահույք

Նախապատվությունը տվեք անվտանգ կահույքին՝ կլորացված անկյուններով, կայուն և ամուր տարբերակներին



Մանկական գոտում չպետք է լինեն վարդակներ, լարեր, մարտկոցներ և հայելիներ


Ի՞նչ է ներառված պահեստային տարածքում

1. Պահեստների պահման գոտի
2. Աշխատանքային գոտի
3. Զուգարան
4. Մեծածավալ ապրանքների գոտի

Այս գոտին պետք է հասանելի լինի միայն մենեջերին:

Պահեստը չպետք է տեսանելի լինի. նախատեսեք այն մուտքից հեռու և հաճախորդային գոտուց բաժանեք պատի միջոցով:

Տարածքի հիմնական մասը հատկացրեք դարակաշարերի համար, առանձնացրեք մի փոքր հատված զուգարանի համար



Հիմնական և լրացուցիչ տարածքներ


Հատակագիծը մշակելիս անպայման նախատեսեք հիմնական գոտիները:
Մնացած գոտիները կարելի է կազմակերպել ըստ ցանկության



Հիմնական գոտիները.

— Պատվերների պահման գոտի

— Զուգարան



Լրացուցիչ գոտիները.

— Աշխատանքային գոտի

— Մեծածավալ ապրանքների գոտի

Պահեստի աշխատանքային հատված. հատակագծում


Ուղղահայաց



Հորիզոնական



Պատերի պարագծով



Ընտրեք ձեր տարածքին համապատասխան տարբերակը և դասավորեք դարակաշարերն այնպես, որ հնարավորին շատ տեղավորվի՝ միևնույն ժամանակ ապահովելով պահեստի տարածքում հանգիստ շարժվելու հնարավորություն

Պատվերների պահման գոտի. հատակագծում

Տեղադրեք դարակաշարի երկայնքով՝ 1 շարքով, իսկ կենտրոնում՝ 2 շարքով ստեղծված կղզյակ:
Անցնելու համար հատվածի օպտիմալ լայնությունը պետք է լինի 100 սմ:
Փոքր տարածքով ՊՀԿ-երում, որտեղ 1 մենեջեր է աշխատում, անցնելու համար հատվածը կարող է լինել 70 սմ:


Մի փակեք տարահանման ուղիները, հրշեջ ծորակները և էլեկտրոնային հաշվիչները դարակաշարերով



Պատվերների պահման գոտի՝ սարքավորում

1. Դարակաշարեր
2. Դարակներ
3. Կողային պատեր
4. Հետին պատեր

Դարակաշարերը հեղույսներով ձգեք միմյանց և ամրացրեք կահույքը պատին կամ հատակին



Պահեստի աշխատանքային հատված

Այստեղ մենեջերը կկարողանա ստանալ ապրանքները կամ կատարել այլ աշխատանք, ինչպես նաև թողնել անձնական իրերը, ճաշել, ընդմիջում անել և լիցքավորել հեռախոսը:

Եթե մենեջերն աշխատում է պահեստում գտնվող ապրանքների հետ, անպայման այս տարածքի վերևում տեղադրեք լրացուցիչ տեսախցիկ

Խնդրում ենք աշխատակցին ծանոթացնել տեսալսա- և լսամոնիթորինգի ընթացակարգի վերաբերյալ քաղաքականությանը՝ ստորագրությամբ հաստատումով



Աշխատանքային գոտի՝ հատակագծում




Տեղադրեք սեղանն ու աթոռը այնպես, որ դրանք չփակեն դարակները և մոտ լինեն պահեստի մուտքին. այս կերպ մենեջերը կարող է արագ հասնել այցելուներին



Տեղադրեք վերնահագուստի կախիչ ազատ պատի վրա և տեղադրեք էլեկտրական վարդակ սեղանի մոտ

Եթե տեղ մնա, տեղադրեք փոքրիկ պահարան կամ դարակաշար՝ մենեջերի անձնական իրերի համար



Աշխատանքային գոտի՝ կահույք և սարքավորում



Ի՞նչ տեղադրել այստեղ

— կախիչ՝ վերնահագուստի համար
— ոչ մեծ սեղան
— աթոռ



Սեղանի վերևում կախեք օգտակար տեղեկություններ, օրինակ՝ ցուցումներ




Չմոռանաք տեխնիկայի համար վարդակների մասին

Սանհանգույց

Եթե տարածքում արդեն կա զուգարան, պահպանեք այն և վերանորոգեք


Եթե միայն թաց կետ կա, հատկացրեք այդ հատվածը զուգարանի համար


Տեսամոնիթորինգի խցիկները չպետք է ուղղված լինեն զուգարանի վրա, այդ թվում՝ զուգարանի ներսում



Զուգարան՝ հատակագծում

Բաց դուռը չպետք է
փակի դարակաշարերը
և տեսարանը





Զուգարան՝ սարքավորում

Ի՞նչ է այստեղ պարտադիր ունենալ.

Ձ. Զուգարանակոնք
Ղ. Լվացարան
Ճ. Հիգիենիկ ցնցուղ

Ի՞նչ լրացուցիչ բաներ կարելի է տեղադրել, որպեսզի ձեր աշխատակիցներին ավելի հարմար լինի.

4. Աղբաման
5. Զուգարանի խոզանակ
Ն. Զուգարանի թղթի կախիչ
Շ. Օճառի դոզատոր
Ո. Թղթե սրբիչների դիսպենսեր
Չ. Պատի հայելի

Արգելվում է տեսամոնիթորինգի խցիկներ տեղադրել անմիջապես զուգարանում



Վերանորոգում

ամեն ինչ մանրամասն բացատրում ենք, եթե դուք առաջին անգամ եք վերանորոգում անում

01 Շարել պատերը
02 Անցկացնել հոսանքալարերը
03 Կատարել ներքին հարդարման աշխատանքները
04 Տեղադրել վարդակները
05 Տեղադրել լուսատուները և տեխնիկան
06 Տեղադրել դռները
07 Ապահովել անվտանգությունը



Գործողությունների հաջորդականություն

1

Շարել
պատերը

2

Անցկացնել
հոսանքալարերը

3

Կատարել
վերջնական հարդարումը

4

Տեղադրել տեխնիկան
և սարքավորումը

5

Տեղադրել
դռները

6

Ապահովել
անվտանգությունը

Եթե տարածքում ներքին հարդարման աշխատանքներն արված չեն

Եթե տարածքում վերջնական հարդարման աշխատանքներ չեն արվել, խնդրում ենք հետևել այս ձեռնարկում բերված բոլոր խորհուրդներին: Դրանք կօգնեն ձեր ՊՀԿ-ին հաղորդել ժամանակակից տեսք, այն դարձնել ապահով և գրավիչ գնորդների համար

Վերանորոգում.

— Դեպի պահեստ անցումը Հայաստանում կարելի է ապամոնտաժել կամ փոփոխել կառուցվածքը միայն գիպսաստվարաթղթի պատերի մոտ
— Սպիտակ առաստաղներ. ներկված, գրիլյատո կամ գիպսաստվարաթղթե
— Հարթ փայլատ պատեր: Երանգները նշված են էջ 84-ում
— Հատակը և շրիշակը՝ բաց մոխրագույն սալիկներով՝ մոխրագույն քսահարթեցմամբ

Սարքավորում.

— Գծային լուսատուներ հանդերձարանի խցիկների, մենեջերի և ապրանքի ստուգման սեղանների վրա
— Հարթ սպիտակ դռներ
— Հրդեհային անվտանգության ապահովման համար սարքավորում: Խորհուրդները կարող եք գտնել էջ 113–114-ում
— Վիդեոմոնիթորինգի տեսախցիկներ

Վերանորոգման աշխատանքներն սկսելուց առաջ համաձայնեցրեք այն ձեր տարածքի սեփականատիրոջ հետ: Հետևեք ձեր տարածաշրջանում գործող շինարարական նորմերին և կանոնակարգերին: Դրանք նշված են շինարարական նորմերի մասին օրենքում: Բացել օրենքը>

Եթե տարածքում ներքին հարդարման աշխատանքներն արված են

Վերանորոգված տարածքում կարող եք պահպանել տարրերն ու ծածկույթները, եթե դրանց գույնը, օգտագործված նյութերը և վիճակը համապատասխանում են պահանջներին

Վերանորոգում.

— Սպիտակ և բաց մոխրագույն երանգների, այդ թվում՝ Արմսթրոնգ համակարգով, ցանկացած առաստաղներ
— Հատակը և շրիշակը՝ բաց բեժ կամ բաց մոխրագույն սալիկներով՝ մոխրագույն քսահարթեցմամբ

Ստորև բերված հղումը պարունակում է հատակածածկույթի օրինակներ, որոնք կարելի է չփոխարինել, եթե տարածքն արդեն վերանորոգված է

դիտել օրինակները


Սարքավորում.

— Տրեկային լուսատուներ (լավ վիճակում) պատվերների ստուգման և սպասման գոտիների վրա: Արմսթրոնգ համակարգի ներկառուցված լուսատուները կարելի է պահպանել, եթե դրանք գտնվում են բավարար վիճակում
— Չեզոք գույների դռներ առանց աչքի զարնող զարդարանքի
— Հրդեհային անվտանգության ապահովման համար սարքավորում: Խորհուրդները կարող եք գտնել էջ 113–114-ում
— Վիդեոմոնիթորինգի տեսախցիկներ


Վերանորոգման աշխատանքներն սկսելուց առաջ համաձայնեցրեք այն ձեր տարածքի սեփականատիրոջ հետ: Հետևեք ձեր տարածաշրջանում գործող շինարարական նորմերին և կանոնակարգերին: Դրանք նշված են շինարարական նորմերի մասին օրենքում: Հղում դեպի օրենքը>

Միջնապատերի կառուցում


Տարածքը հաճախորդային գոտու և պահեստի բաժանելու համար անհրաժեշտ է միջնորմ:
Տարածքում գոտիները սահմանելու 3 եղանակ կա.



1. Ստեղծել փակ մուտք




2. Ստեղծել բաց մուտք



3. Պահպանել բացվածքը, եթե կա


Միջնորմներ տեղադրելու անհրաժեշտության դեպքում նախքան աշխատանքներն սկսելը համաձայնեցրեք փոփոխությունները սեփականատիրոջ հետ: Հայաստանում կարելի է ապամոնտաժել կամ փոփոխել կառուցվածքը միայն գիպսաստվարաթղթի պատերի մոտ

Շարում ենք պատերը. պահեստի փակ մուտք




Տարբերակ 1

Շարել նոր պատ
մինչև առաստաղը



Տարբերակ 2

Նոր պատ՝ մինչև առաստաղը,
և դռան բացվածք




Տարբերակ 3

Առաստաղին չհասնող նոր պատ

Պահեստի փակ մուտք

Շարեք միջնորմը՝ պահեստը առանձնացնելու համար: Բացումը թողեք 150 սմ:


Եթե բացվածքը գտնվում է մենեջերի սեղանի ետևում, միջնորմի նվազագույն լայնությունը պետք է լինի 150 սմ՝ բրենդ-պատը դրա վրա տեղավորելու համար



Շարում ենք պատերը. պահեստի բաց մուտք

Այս տարբերակի դեպքում վարագույրի կարիք չկա, քանի որ հաճախորդները չեն կարող տեսնել, թե ինչ է կատարվում պահեստում:


Եթե առաստաղի բարձրությունը 2,7 մ կամ ավելի ցածր է, կառուցեք լիարժեք բարձրությամբ միջնորմ






Պահեստի բաց մուտք

Արկղերը ներս բերելն ու դուրս բերելը ավելի հեշտ դարձնելու համար, միջնորմը տեղափոխեք գլխավոր պատից 150 սմ հեռավորության վրա: Միջնորմի նվազագույն երկարությունը՝ 120 սմ



Էլեկտրական հաղորդալարերի տեղադրում



Թաքնված լարանցում

Պատերի կապիտալ վերանորոգում նախատեսելու դեպքում, թաքցրեք լարանցումը



Բաց լարանցում՝ առաստաղից

Թաքնված մոնտաժումն անհնարին լինելու դեպքում սա հարմար տարբերակ է




Բաց լարանցում՝ հատակից

Թաքնված լարանցման ևս մեկ այլընտրանք են մալուխների հատակային կանալները

Վերանորոգման աշխատանքներն սկսելուց առաջ ծանոթացեք տեղական օրենսդրությանը: Էլեկտրական սարքերը և պահուստային սնուցման աղբյուրները պետք է տեղադրվեն նախագծային պահանջներին համապատասխան: Բոլոր պահանջները սահմանված են օրենքում: Բացել օրենքը>

Թաքնված լարանցում


Իրականացվում է պատերի նորոգման ընթացքում՝ նախապես պլանավորված վայրերում վարդակներին մոտեցմամբ



1. Վարդակ՝ հանդերձարանների վերևում
2. Վարդակ՝ ապրանքների ստուգման սեղանի համար
3. Վարդակ՝ մենեջերի գոտու համար
4. Վիդեոմոնիթորինգի տեսախցիկներ
5. Օդորակիչ

Բաց լարանցում՝ առաստաղից


Իրականացվում է մալուխների կանալների միջոցով. դա ավելի կոկիկ տեսք է հաղորդում լարանցմանը, իսկ առաստաղի վրա կարող է թաքցվել կախովի համակարգերի ներսում



1. Վարդակ՝ հանդերձարանների վերևում
2. Վարդակ՝ ապրանքների ստուգման սեղանի համար
3. Վարդակ՝ մենեջերի գոտու համար
4. Վիդեոմոնիթորինգի տեսախցիկներ
5. Օդորակիչ

Բաց լարանցում՝ հատակից

Հատակին այն կարող է իրականացվել կամ հատակի ծածկույթի հարթեցման շերտի տակ,
կամ հատուկ հատակի մալուխային կանալների միջոցով



1. Վարդակ՝ հանդերձարանների վերևում
2. Վարդակ՝ ապրանքների ստուգման սեղանի համար
3. Վարդակ՝ մենեջերի գոտու համար
4. Վիդեոմոնիթորինգի տեսախցիկներ
5. Օդորակիչ

Հատակի ծածկ

Կարևոր է, որ հատակի ծածկույթը լինի հարթ և չսահող

Բանուկ հատվածներում խորհուրդ է տրվում օգտագործել սալիկ
կամ կոմերցիոն լինոլեում



Սալիկ



Լինոլեում


Սալիկ

Կերամագրանիտ տերացցո՝ բաց մոխրագույն Kerama Marazzi SG632400R կամ նույն գույնի համարժեք նյութ:

Ենթադրենք՝ օգտագործում ենք բեժ գույնի տարբերակը՝ SG631800R:

Չափսը՝ 60×60 սմ


Cerezit
մոխրագույն (07)




Արտադրողը կարող է փոփոխել արտիկուլները: Պատվերը տեղադրելիս նշեք սալիկի ամբողջական անվանումը


Ինչպես շարել սալիկները


Սկսեք տարածքի կենտրոնից, որպեսզի եզրային հատվածներում մնան հավասար չափսերի կտորներ






Մի սկսեք անկյունից՝ դա կարող է խախտել համաչափությունը





Շրիշակ

Խորհուրդ ենք տալիս շրիշակի համար օգտագործել սալիկներ. դա ավելի հարմար է խոնավ մաքրում իրականացնելու համար





Հատակի և շրիշակի համար ընտրեք միևնույն սալիկները

Չափսը՝ 60×20 սմ


Կոմերցիոն լինոլեում

IQ ZENITH,
երանգը՝ 712

կամ նույնանման երանգ ունեցող համարժեք



Ինչպես փռել լինօլեումը



Օգտագործեք հատուկ շրիշակ, որպեսզի լինօլեումը մտնի պատի վրա



Լինօլեումի անհրաժեշտ քանակը հաշվարկելիս ավելացրեք հատուկ շրիշակի բարձրությունը և ևս 5 սմ, եթե պատերը անհարթ են




Լինօլեումը փռեք այնպես, որ կարն անցնի տարածքի կարճ կողմով կամ կահույքի տակով

Այլընտրանքային լինոլեում

Այլընտրանքային սալիկ




Tarkett Acczent Pro Aspect 2



Tarkett Primo Plus 315

Կերամագրանիտ՝ ուրալյան գրանիտ մոնոկոլոր սպիտակ UF001MR 60x60x1



Կերամագրանիտ՝ ուրալյան գրանիտ մոնոկոլոր բաց մոխրագույն UF002MR փայլատ 60x60x1

Հաճախորդային գոտում պատերի, առաստաղի ներկի և սարքավորումների գույնը

Մեր բոլոր հանձնման կետերում օգտագործվում են միևնույն գույները

— Պահեստում պատերը, սյուները և բացվածքը. բաց մոխրագույն Dulux 10RB 83/012: Պահեստը ներկելը պարտադիր չէ

— Առաստաղը, գոգնոցը (պատի վերին հատվածը) և շեպերը՝ ստիպակ հիմք Dulux:

— Ակցենտային պատը՝ Tikkurila OPUS L 343

— Մալուխների կանալները, օդորակիչները և մարտկոցները ներկվում են այն պատի գույնով, որին դրանք ամրացված են:

Կարելի է օգտագործել միայն պատերի համար նախատեսված փայլատ լվացվող ներկ

Առաստաղ
Սպիտակ հիմք Dulux

Պատի գոգնոց
Սպիտակ հիմք Dulux

Պատ
Dulux
10RB 83/012


Ակցենտային պատ
Tikkurila
OPUS L 343

Առաստաղ

Առաստաղը որոշում է ամբողջ տարածքի տրամադրությունը: Ներկեք այն հարթ սպիտակով. այդ կերպ հանձնման կետն ավելի ընդարձակ կթվա



Հարդարման եղանակները




Առաստաղ՝ գիպսաստվարաթղթից

Հարմար է այն դեպքերում, երբ տարածքը մեծ չէ, իսկ առաստաղը հարթեցնելու կարիք կա



Պարզ գունավորում

Օգտագործեք այս տարբերակը, եթե առաստաղին մեծ օդորակիչներ չկան, և լարերը քիչ են: Ցինկապատ պողպատե տուփերի և խողովակների համար անհրաժեշտ են հատուկ էմալներ



Գրիլյատո համակարգ

Առաստաղը ներկեք սպիտակով և տեղադրեք 10×10 սմ տեղերով համակարգ: Եթե չափսը փոքր է, հրդեհաշիջման սարքավորումները պետք է տեղափոխել գլխավոր առաստաղից դեպի գրիլյատո, թեև սա ավելի բարդ է

Առաստաղի գույնը

Բաց առաստաղի և գիպսաստվարաթղթի համար կարելի է օգտագործել միայն սպիտակ ներկ:

Գրիլյատո տեղադրելու դեպքում ընտրեք սպիտակ և բաց մոխրագույն տարբերակները, իսկ դրա վերևում առաստաղը և կոմունիկացիաները ներկեք սպիտակ

Dulux
սպիտակ հիմք



Պատերի հարդարում

Հաճախորդային գոտում պատերը բաժանվում են.
— ակցենտային պատի
— գոգնոցի (պատի վերին հատվածը)
— պատի հիմնական մասի
— բացվածքների շեպերի


Յուրաքանչյուր տարրի համար — ներկի իր երանգը




Գոգնոց և պատի հիմնական մաս

Գոգնոցի գիծն անցկացրեք հանդերձարանի բարձրության գծին համապատասխան:
Եթե խցիկի բարձրությունը 200 սմ է, ապա գոգնոցը պետք է սկսվի այդ կետից


Առաստաղը՝ մինչև 250 սմ
Առանց գոգնոցի



Առաստաղը՝ 250–300 սմ
Գոգնոցը՝ հատակից 200 սմ
բարձրության վրա




Առաստաղը՝ սկսած 300 սմ-ից
Գոգնոցը՝ հատակից 200 սմ
բարձրության վրա



Ակցենտային պատ

Այս պատը կծառայի որպես բրենդ-պատի ֆոն: Մենեջերի սեղանի ետևում գտնվող ամբողջ պատը պետք է ներկված լինի: Եթե հանձնման տարածքը գտնվում է հանդերձարանների կամ ստուգման սեղանի հետ նույն պատի երկայնքով, ընտրեք ձեր հատակագծին համապատասխանող տարբերակը



Ներկում ենք ամբողջ պատը,
եթե բացվածքը մինչև առաստաղ չէ



Ներկում ենք մինչև բացվածքը,
եթե այն մինչև առաստաղ է

Ինչպես ներկել

Ակցենտային պատը կոկիկ ձևակերպելու համար ներկը 2 սմ-ով տարածեք հարակից պատերի վրա. դա կհեշտացնի անկյունը ներկելը

Tikkurila OPUS L 343



Վարդակներ

Եթե ցանկանում եք լուսատուներ տեղադրել հանդերձարաններում, մի մոռացեք վարդակների մասին:

Դրանք նաև օգտակար կլինեն ստուգման մոտ: Հաճախորդները կօգտագործեն այդ վարդակները՝ գնումներ կատարելուց առաջ սարքավորումները ստուգելու համար



Վարդակների գույնը և մոնտաժումը

Ի՞նչ գույն ընտրել


Ստուգման սեղանների մոտ գտնվող տարածքների համար արժե ընտրել սև վարդակներ, իսկ սպիտակները տեղադրել հանդերձարանի և այլ կահույքի վերևում

Մալուխների կանալներ


Եթե թաքնված լարերի անցկացումը հնարավոր չէ, կոկիկ տեղադրեք մալուխային կանալները պատի գույնին համապատասխան: Եթե մալուխն անցնում է մանուշակագույն պատի երկայնքով, օգտագործեք մանուշակագույն կանալ, եթե այն անցնում է սպիտակ պատի երկայնքով, ներկեք այն սպիտակ: Եթե կան մի քանի գույներ, համապատասխանեցրեք բոլոր գույները



Վարդակ ստուգման սեղանի համար



Վարդակ հանդերձարանում




Մալուխային կանալ




Վրադրվող վարդակներ հաճախորդային գոտու համար

Որտեղ տեղադրել



Հանդերձարանում լուսատուներ տեղադրելու դեպքում


Բարձրությունը՝ 230 սմ
Վարդակի գույնը՝ սպիտակ



Ապրանքների ստուգման սեղանի մոտ
Ձախ կամ աջ կողմերում նահանջ՝ 4 սմ

Բարձրությունը՝ 120 սմ
Վարդակի գույնը՝ սև

Տեղադրման վայրը՝ մենեջերի սեղան




Մենեջերի սեղան
Բարձրությունը՝ 40 սմ
Վարդակի գույնը՝ սպիտակ



Բաց լարանցում՝ առաստաղից


Թաքնված մոնտաժումն անհնարին լինելու դեպքում սա հարմար տարբերակ է




Բաց լարանցում՝ հատակից

Թաքնված լարանցման ևս մեկ այլընտրանք են մալուխների հատակային կանալները

Ի՞նչն է նաև անհրաժեշտ հաշվի առնել



Մի տեղադրեք վարդակները մանկական անկյունում՝ վտանգավոր է



Մի տեղադրեք վարդակները բրենդ-պատի վրա՝ անգամ ցածի հատվածում



Տեղադրեք էլեկտրական վարդակ պահեստում՝ մենեջերի հանգստի գոտում

Լուսավորության համակարգ



Ընտրեք էներգաարդյունավետ լուսատուներ՝ էլեկտրականության համար ծախսվող գումար խնայելու համար

Գծային լուսատուներ



Կախովի

Երկարությունը՝ 70–90 սմ
Լույսի ջերմությունը՝ 4000–5000 K
Պաշտպանության աստիճանը՝ IP44
Իրանի գույնը՝ սպիտակ կամ սև




Դնովի

Երկարությունը՝ 70–90 սմ
Լույսի ջերմությունը՝ 4000–5000 K
Պաշտպանության աստիճանը՝ IP44
Իրանի գույնը՝ սպիտակ կամ սև


Ի՞նչ բարձրության վրա տեղադրել

Հեռավորությունը հանդերձարանից մինչև լուսատուն՝ 25–50 սմ


Առաստաղը՝ մինչև 250 սմ



Առաստաղը՝ 250–300 սմ




Առաստաղը՝ սկսած 300 սմ-ից




Որտեղ տեղադրել

Պահեստում լուսատուները դասավորեք ուղղահայաց,
իսկ հաճախորդների գոտում կարող եք օգտագործել տարբերակներից որևէ մեկը.



Անկանոն




Միմյանց ուղղահայաց՝ լուսատուների
միջև հավասար հեռավորություններով


Լուսավորությունը կահույքի վերևում

Լուսատուները կախեք հանձնման և ապրանքների ստուգման սեղանների, հանդերձարանների և մանկական գոտիների վերևում


Սեղանների վերևում՝ կահույքի կենտրոնով, հանդերձարանի վերևում՝ պատից 30 սմ հեռավորության վրա




Պատվերների հանձնման սեղան



Ապրանքների ստուգման սեղան



Հանդերձարաններ



Մանկական անկյուն

Տեսախցիկներ

Յուրաքանչյուր հանձնման կետում պետք է տեղադրվեն տեսամոնիթորինգի խցիկներ: Դրանք նպաստում են հասարակական կարգի պահպանմանը:


Կարևոր է, որ տեսախցիկը ֆիքսի ապրանքի հետ կատարվող բոլոր գործողությունները՝ ինչպես է մենեջերը ստանում տուփերը և տեղադրում ապրանքները պահեստում, ինչպես է պատվերը հանձնվում գնորդին, ինչպես է գնորդը բացում և ստուգում ապրանքը, ինչպես է մենեջերը ձևակերպում մերժումը, վերադարձը, պատրաստում ապրանքը վերադարձի համար կամ ուղարկում ապրանքն ուտիլացման:

Տեսագրումը օգտակար կլինի վիճահարույց իրավիճակների դեպքում




Որտեղ տեղադրել


Հաճախորդների գոտում տեսախցիկը կարող է տեղադրվել 230 սմ-ից ցածր միայն, եթե ավելի բարձր տեղադրելու դեպքում տեսախցիկը ֆիքսում է նաև հանդերձարանի ներսում տարածքը




Սեղանի և բրենդ-պատի կողքին
Բարձրությունը՝ 230 սմ



Ստուգման սեղանի կողքին
Բարձրությունը՝ 230 սմ



Մի տեղադրեք տեսախցիկը բրենդ-պատի վրա



Պահեստում
Բարձրությունը՝ 250 սմ

Որտեղ տեղադրել

Տեղադրեք տեսախցիկներն այնպես, որ դրանք ընդգրկեն հանձնման կետի ամբողջ տարածքը, ներառյալ հաճախորդների գոտին և պահեստը:

Եթե պահեստում իրականացվում են ապրանքի ընդունման և վերադարձի գործառույթներ, ապա մենեջերի սեղանին ուղղված տեսախցիկի առկայությունը պարտադիր է:

Աջ կողմում մենք սխեմատիկորեն ցույց ենք տալիս, թե որտեղ տեղադրել տեսախցիկները





Օդորակման համակարգ


Այս սարքավորումն ունենալը պարտադիր չէ: Այնուամենայնիվ, կարևոր է հաշվի առնել տարածքի պայմանները: Եթե դրանք այնքան էլ հարմար չեն, արժե մտածել սարքավորումները տեղադրելու մասին:

Ցանկալի է, որ արտաքին բլոկը շենքի գլխավոր ճակատին չտեղադրվի: Պարզապես համոզվեք, որ տեղադրումը համաձայնեցրել եք սեփականատիրոջ և կառավարող ընկերության հետ:


Մոդելն ընտրելիս հաշվի առեք տարածքի մակերեսը և հզորությունը




Որտեղ տեղադրել



Առաստաղի հարդարանքից թողեք 15 սմ, բայց օդորակիչը հատակից 300 սմ-ից բարձր մի տեղադրեք




Մի տեղադրեք օդորակիչն այնտեղ, որտեղ մարդիկ շատ ժամանակ են անցկացնում, որպեսզի մենեջերը և այցելուները չհիվանդանան




Աշխատանքային սեղանների, հանդերձարանների և մանկական գոտիների վերևում գտնվող պատերի հատվածները հարմար չեն օդորակիչ տեղադրելու համար

Ո՞ր պատի վրա տեղադրել







— Իդեալական է

— Լավ է

— Հարմար չէ

Ջեռուցման համակարգ

Հանձնման կետում ջերմաստիճանի տատանումներից խուսափելու համար նախապատվությունը տվեք ջերմաստիճանի կարգավորման հնարավորությամբ ալյումինե մարտկոցներին:

Ընտրությունը կատարելիս կողմնորոշվեք պատուհանագոգի բարձրությամբ՝ մարտկոցը չպետք է լինի դրանից բարձր



Որտեղ տեղադրել

Տեղադրեք մարտկոցը յուրաքանչյուր մարտկոցի տակ՝ շրիշակից բարձր մակարդակի վրա:

Մոդելն ընտրելիս հաշվի առեք տարածքի մակերեսը: Եթե տարածքը մեծ է, նախապատվությունը տվեք ավելի հզոր մոդելին:

Ներկեք մարտկոցները պատերի գույնով






Դռներ

Անհրաժեշտ է մեկուսացված սենյակների, օրինակ՝ զուգարանի համար




Ինչպես ընտրել

Խուլ, պարակալով և առանց զարդարանքի: Պատին համապատասխանող գույնի՝ սպիտակ կամ բաց մոխրագույն: Պարզ բռնակ՝ սև, մոխրագույն կամ դռան գույնի







Եթե դուռն ակցենտային պատի մեջ է

Եթե դուռը գտնվում է ակցենտային պատի վրա, ներկեք այն նույն գույնով, որպեսզի այն ուշադրություն չգրավի

Tikkurila OPUS L 343



Հակահրդեհային անվտանգություն

Խնդրում ենք պահպանել հրդեհային անվտանգության կանոնները և կատարել նվազագույն պահանջները

Պարտադիր է տեղադրման՝

փոշու միջոցով գործող 2 ՕՊ-5 կրակմարիչ, ինչը բավարար է մինչև 200 մ^2 **մակերեսով տարածքների համար Ի՞նչ** է անհրաժեշտ տեղադրել՝ ՊՀԿ-ի անվտանգությունն ապահովելու համար

Ծխի տվիչներ՝ պատասխանատու անձի հեռախոսին ազդանշան ուղարկելու հնարավորությամբ: Կարելի է նաև տվիչները միացնել շենքի ընդհանուր համակարգին:

Ձեռքով միացվող հրդեհային ազդանշան՝ ելքի մոտ, մատչելի, տեսանելի տեղում



Տարածքից ելքը մի զբաղեցրեք

Հրդեհային անվտանգության պահանջների պահպանման պատասխանատվությունը կրում է ՊՀԿ-ի սեփականատերը

Սարքավորում



Հրդեհաշիջիչներ

Փոշու միջոցով գործող 2 հրդեհաշիջիչ ՕՊ-5

Յուրաքանչյուրի կողքին՝ 1,7 մ բարձրության վրա, կա հատուկ պիտակ





Ծխի տվիչներ

Դրանք անհրաժեշտ են պահեստում և հաճախորդների գոտում՝ հրդեհը արագ հայտնաբերելու համար



Հրդեհային ազդանշան

Տեղադրեք մուտքի դռան մոտ, հատակից 1,5 մետր բարձրության վրա և ցանկացած սարքավորումից կամ կահույքից 0,75 մետր հեռավորության վրա:
Մի տեղադրեք ակցենտային պատի վրա

Կահույք և սարքավորում հաճախորդային գոտում

01 Մենեջերի սեղան
02 Հանձնման սեղան՝ 2 տեղ
03 Հանձնման սեղան՝ 3 տեղ
04 Ապրանքի ստուգման սեղան
05 Հանդերձարան
06 Նստարան
07 Աղբաման


ВЫХОД

Ամեն ինչ սկսվում է տուփից

Այն հանձնման կետերի համար աշխատանքային գործիք է,

որն օգտագործվում է պատվերները բերելու, վերադարձներն ուղարկելու և աղբ հավաքելու համար:


Կահույքը նախագծելիս մենք հաշվի ենք առել տուփերի չափսերը



լայնությունը՝ 40 սմ
երկարությունը՝
60 սմ

Կահույք և սարքավորում


1. Մենեջերի սեղան
2. Հանձնման սեղան՝ 2 տեղ
3. Հանձնման սեղան՝ 3 տեղ
4. Փոքր սեղան՝ ապրանքների ստուգման համար
5. Մեծ սեղան՝ ապրանքների ստուգման համար
6. Հայելի
7. Հանդերձարանի նստարաններ
8. Հաճախորդային գոտու նստարաններ
9. Աղբաման
10. Հանդերձարանի լուսատուները
11. Հանդերձարան՝ 200 սմ



նայել գծագրերը


Հիմնական և լրացուցիչ կահույք

Առանց հիմնական կահույքի դուք չեք կարողանա հանձնել պատվերները կամ սպասարկել գնորդներին:
Եթե պլանավորում եք ստեղծել սպասման գոտի կամ ընդլայնել հանձնման գոտի, օգտագործեք լրացուցիչ կահույք



Հիմնական հավաքածու.

1. Մենեջերի սեղան
2. Հանձնման սեղան՝ 2 տեղ
3. Ստուգման փոքր սեղան
4. Սպիտակ նստարան՝ 2 հատ
5. Վարդագույն նստարան
6. Աղբաման
7. Հանդերձարան՝ 2 հատ




Լրացուցիչ տարրեր.


1. Հանձնման սեղան՝ 3 տեղ
2. Ստուգման մեծ սեղան
3. Հայելի
4. Վարդագույն նստարաններ
5. հանդերձարանի լուսատուներ
6. Լրացուցիչ հանդերձարան

Մենեջերի սեղան

Ամեն ինչ մտածված է բոլոր մանրամասներով. տեղեր են նախատեսված տեխնիկայի և տպագիր նյութերի համար, իսկ հակառակ կողմում նախատեսված դարակին գնորդները կարող են դնել տոպրակներ և պայուսակներ:

Սեղանը պատվիրեք նմուշի համաձայն կամ ընտրեք նմանատիպ սեղան՝ պատրաստի տարբերակներից





Լայնությունը՝ 80 սմ
Բարձրությունը՝ 128,4 սմ
Երկարությունը՝ 80 սմ

Մենեջերի աթոռ

Եթե մենեջերը նստած է աշխատում,
գնեք հարմարավետ աթոռ:


Նախընտրելի են սև, սպիտակ,
բեժ կամ մոխրագույն մոդելները



Պատվերների հանձնման սեղան՝ 2 տեղ

Նեղ տարածքներում հարմար հիմնական տարբերակ:

Սեղանը պատվիրեք նմուշի համաձայն կամ ընտրեք նմանատիպ սեղան՝ պատրաստի տարբերակներից



Տեսքը դիմացից




լայնությունը՝ 70 սմ
բարձրությունը՝ 105 սմ
երկարությունը՝ 96 սմ


Պատվերների հանձնման սեղան՝ 3 տեղ

Այստեղ տեղն ավելի շատ է. կարող եք պատվերները հանձնել միաժամանակ մի քանի հաճախորդի:

Սեղանը պատվիրեք գծագրերի համաձայն կամ ընտրեք նմանատիպ պատրաստի սեղան



Տեսքը դիմացից




լայնությունը՝ 70 սմ
բարձրությունը՝ 105 սմ
երկարությունը՝ 140 սմ


Սեղանների համադրությունը

Ընտրեք ձեր կետին համապատասխանող տարբերակը —
ամեն ինչ կախված է տարածքի մակերեսից, ծանրաբեռնվածությունից և մենեջերների թվից

Մենեջերի 1 սեղանով



Մենեջերի 2 սեղանով




Ապրանքների զննման սեղան

Այստեղ հաճախորդները կարող են մանրակրկիտ զննել ստուգման կարիք ունեցող ապրանքները:


Մի մոռացեք տեղ հատկացնել էլեկտրական վարդակի համար, որպեսզի հաճախորդները կարողանան փորձարկել սարքավորումները:


Եթե տարածքը թույլ է տալիս, հաճախորդային գոտու կենտրոնում կարող եք տեղադրել 2 նման սեղան:

Սեղանը պատվիրեք նմուշի համաձայն կամ ընտրեք նմանատիպ սեղան՝ պատրաստի տարբերակներից



2 սեղան միասին






Լայնությունը՝ 80 սմ
Բարձրությունը՝ 105 սմ
Երկարությունը՝ 53 սմ

Մեծ սեղան՝ ապրանքների ստուգման համար

Մեծ տարածք ունեցող հանձնման կետերի համար հարմար է ավելի մեծ սեղան: Այն կօգնի հաճախորդներին ավելի մանրակրկիտ զննել ապրանքը:

Սեղանը պատվիրեք նմուշի համաձայն կամ ընտրեք նմանատիպ սեղան՝ պատրաստի տարբերակներից




Լայնությունը՝ 93 սմ
Երկարությունը՝ 75 սմ
Բարձրությունը՝ 105 սմ

Հանդերձարան

«Հատակագծում» բաժնում ներկայացրել ենք, թե ինչպես դասավորել հանդերձարանները. մնում է միայն դրանք հավաքել և տեղադրել:

Հանդերձարանները պատվիրեք նմուշի համաձայն կամ ընտրեք նմանատիպ տարբերակներ



Լայնությունը՝ 120 սմ
Բարձրությունը՝ 200 սմ
Երկարությունը՝ 120 սմ

Սարքավորում հանդերձարանի համար

Տեսքը կողքից



Տեսքը վերևից



Հանդերձարանի հավաքածուն ներառում է.

1. Մետաղաձող
2. Հայելի
3. Կեռիկներ
4. Լուսատուներ
5. Կոշիկի թի
6. Վարագույր
7. Նստարան
8. Գորգ

Նստարան՝ հանդերձարանի համար

Նստարանը կարող է լինել ցանկացած տեսակի՝ ամբողջական կամ ձողային:

Սպիտակ նստարանները տեղադրեք միայն հանդերձարաններում:

Նստարանները պատվիրեք նմուշի համաձայն կամ ընտրեք նմանատիպ տարբերակներ



Լայնությունը՝ 36 սմ
Երկարությունը՝ 90 սմ
Բարձրությունը՝ 49 սմ

Նստարան՝ հաճախորդային գոտու համար

Գնորդները կկարողանան նստել նստարանին կամ հերթում սպասելիս դրա վրա դնել ձեռքի բեռները:

Եթե տարածքը փոքր է, նախընտրությունը տվեք փոքր նստարանների:

Նստարանը պատվիրեք նմուշի համաձայն կամ ընտրեք նմանատիպ տարբերակներ





Ստանդարտ նստարան.
Լայնությունը՝ 36 սմ
Երկարությունը՝ 90 սմ
Բարձրությունը՝ 49 սմ

Փոքր նստարան.
Լայնությունը՝ 36 սմ
Երկարությունը՝ 65 սմ
Բարձրությունը՝ 49 սմ


Հայելի

Հայելիները պատվիրեք նմուշի համաձայն կամ ընտրեք նմանատիպ տարբերակներ:


Ամրացրեք պատին՝ դյուբելների օգնությամբ: Ստուգեք ամրակները. դրանք պետք է ամուր լինեն, որպեսզի հայելին չընկնի

Լայնությունը՝ 70 սմ
Բարձրությունը՝ 130 սմ

Նստարանով հայելի



Հայելի




Աղբարկղ

Աղբամանները նախագծվել են տուփերի չափսերը հաշվի առնելով, որպեսզի աղբը հավաքելը և նետելը հարմար լինի:

Պատվիրեք աղբամանները նմուշի համաձայն կամ նմանատիպ տարբերակ:

Այլևս կարիք չկա աղբամանները տեղադրել հանդերձարաններում. տեղադրեք միայն հաճախորդային գոտում



Լայնությունը՝ 68 սմ
Երկարությունը 64 սմ
Բարձրությունը՝ 48 սմ


Պահեստի կահույք և սարքավորումներ


01 Դարակաշարեր
02 Ապրանքների պահման եղանակներ
03 Կահույք՝ աշխատանքի և հանգստի գոտիների համար
04 Սանիտարական տեխնիկա
05 Զուգարանային պարագաներ



Հիմնական և լրացուցիչ սարքավորում

Հիմնական հավաքածուն կարևոր է ՊՀԿ-ի գործունեության և մենեջերի աշխատանքը հարմարավետ դարձնելու համար: Եթե պլանավորում եք կահավորել զուգարանը, ստեղծել լիարժեք հանգստի գոտի և պահեստային տարածք մեծ առարկաների համար, օգտագործեք լրացուցիչ հավաքածուում ներառված կահույքը և սարքավորումները





Հիմնական հավաքածու՝

1. Դարակաշարեր
2. Սանիտարական տեխնիկա
3. Սեղան և աթոռ


Լրացուցիչ տարրեր

1. Զուգարանի պարագաներ
2. Կախիչներ
3. Տակնոց՝ մեծ չափսերի ապրանքների համար

Դարակաշարեր

Պահեստը պլանավորելիս հաշվի առեք կագնակներ ունեցող 1 դարակաշարի երկարությունը:


Դարակներ Ստորին դարակը տեղադրեք հատակից 10 սմ բարձրության վրա



Լայնությունը՝ 100 սմ
Բարձրությունը՝ 185 սմ
Խորությունը՝ 51 սմ


*Հնարավոր է չափսերի ± 50 մմ տարբերություն

Պահման համար աքսեսուարներ



Բաժանարարներ

Օգտագործեք ցանկացած նյութից պատրաստված բաժանարարներ՝ պատվերները առանձին պահելու համար: Իրերը կարող եք պահել նաև սովորական տուփերի մեջ



Տակնոց՝
120×80×15 սմ

Խոշոր իրերը պահեք տակնոցների վրա՝ արտահոսքից և վնասումից խուսափելու համար: Տեղադրեք դրանք ելքին մոտ և թողեք առնվազն 1 մ տարածք՝ անցնելու համար

Աշխատանքային գոտու կահույք

Ընտրել ենք առանց ավելորդ դետալների կոմպակտ կահույք —
այն լավ կտեղավորվի պահեստում


աթոռ



աթոռ



հագուստի կախիչներ



Սանիտարական տեխնիկա

Զուգարանում տեղադրեք զուգարանակոնք, լվացարան և ցնցուղ, որպեսզի հեշտ լինի դույլը ջրով լցնելը և հանդերձարանի գորգերը լվանալը

զուգարանակոնք



լվացարան



փոքր ցնցուղ



Զուգարանի պարագաներ

Այս պարագաները թույլ կտան զուգարանում կարգուկանոն պահելը և պարագաների համար տեղեր հատկացնելը


աղբարկղ



խոզանակ



թղթի պահիչներ



դոզատոր կամ օճառաման



դիսպենսեր կամ կախիչներ



հայելի




Տեքստիլ

01 Տեքստիլի բազային հավաքածու
02 Հանդերձարանի վարագույր
03 Մետաղաձող պահեստ մուտքի համար
04 Գորգ



Տեքստիլի բազային հավաքածու

1. Վարագույր հանդերձարանի համար
2. Վարագույր մուտքի համար
3. Մետաղաձող պահեստ մուտքի վարագույրի համար
4. Գորգ



Հանդերձարանի վարագույր

Լինում են մանուշակագույն և մաջենտա գույնի՝ նախշով:

Գույները և նախշերը օգտագործեք հաջորդականորեն, որպեսզի նույնանման վարագույրները կողք կողքի կախված չլինեն



ներբեռնել նյութերը

Պահեստ մուտքի վարագույր

Եթե պահեստ մուտքերը տեսանելի են հաճախորդների գոտուց՝ վարագույր կախեք: Եթե տեսանելի չեն՝ վարագույրներ պետք չեն:

Պահեստի վարագույրի գույնը պետք է տարբերվի մոտակա հանդերձարանի վարագույրի գույնից:

Վարագույրը ամրացրեք քրոմապատ խողովակին՝ նույն մակարդակի վրա, ինչ հանդերձարաններում



Մետաղաձող



Գորգ

Յուրաքանչյուր հանդերձարանում տեղադրեք գործվածքի կամ ռետինե մոխրագույն գորգ Երկար ծառայելու համար, գորգը դրեք նստարանի տակ:

Գնորդները կկարողանան այն ինքնուրույն վերցնել անհրաժեշտության դեպքում





Բրենդավորում

01 Բրենդ-պատ
02 Պլակատներ
03 Վրադիրներ՝ կահույքի համար


-30%
wildberries

Ինչպես իրականացնել հանձնման կետի արտաքին ձևավորումը


1. Բրենդ-պատ
2. Պլակատներ
3. Ստուգման սեղանի վրադիր
4. Հանձնման սեղանի վրադիր
5. Մենեջերի սեղանի վրադիր

Եթե բավարար տարածք կա,
օգտագործեք բոլոր տարրերը



Բրենդավորման հիմնական և լրացուցիչ տարրեր

Բրենդավորում ենք պատերը և կահույքը, որպեսզի հանձնման կետը ճանաչելի լինի





Հիմնական հավաքածու.

1. Բրենդ-պատ
2. Պլակատ
3. Վրադիր՝ ապրանքների ստուգման սեղանի համար
4. Վրադիրներ՝ մենեջերի սեղանի համար
5. Վրադիրներ՝ հանձնման սեղանի համար


Լրացուցիչ տարրեր.

1. Երկրորդ բրենդ-պատ
2. Լրացուցիչ պլակատներ

Բրենդավորված պատ

Նախշապատ հատված՝ Wildberries-ի ֆիրմային գույներով և տարբերանշանով:

Հանձնման կետում 2 նման բրենդ-պատ կա: Ներբեռնեք նմուշները և պատվիրեք բրենդ-պատերը տպարանում



Չափսը՝ 100×400 սմ

Նյութեր՝
վինիլային թաղանթ

ներբեռնել նյութերը

Որտեղ նախատեսել առաջին բրենդ-պատերը




Եթե տարածքը թույլ է տալիս, բրենդ-պատը տեղադրեք կենտրոնում՝ մենեջերի սեղանի հետևում



Եթե տարածքը թույլ է տալիս, տեղադրեք մենեջերի սեղանի և հանդերձարանների կամ ստուգման սեղանի միջև, բայց միայն ակցենտային պատի վրա

Որտեղ նախատեսել երկրորդ բրենդ-պատը




Պատվերների ստուգման սեղանի կողքը




Ցանկացած ազատ պատի վրա, որտեղ բրենդ-պատի առջև կահույք չի դրվելու (բացի նստարանից)

Բրենդ-պատի բարձրությունը


Բրենդ-պատը պետք է լինի հատակից մինչև առաստաղ բարձրությամբ




Փակցրեք՝ շրիշակից դեպի վեր ուղղությամբ



Առաստաղի բարձրությունը՝ 250 սմ



Առաստաղի բարձրությունը՝ 250–300 սմ



Առաստաղի բարձրությունը՝ 300 սմ-ից սկսած

Պաստառ

A1 ձևաչափի պլակատ Wildberries-ի ֆիրմային գույներով զարդանախշով և տարբերանշանով: Եթե անհրաժեշտ է թարմացնել ձևավորումը, բավական է տպել պլակատը. ամրակը բազմակի օգտագործման համար է:

Ներբեռնեք նմուշը և պատվիրեք պլակատը տպարանում




Չափսը՝ 59,4×84,1 սմ

Նյութեր՝
պոլիպրոպիլենային թաղանթ


ներբեռնել նմուշները

Որտեղ կախել պլակատը



Տեղադրեք ապրանքների ստուգման սեղանի կենտրոնում

Պլակատը փակցրեք այնպես, որ վերին եզրը լինի հանդերձարանի և գոգնոցի վերին գծի մակարդակին



Պլակատը ամրացված է Velcro-ով. պարզապես հեռացրեք պաշտպանիչ շերտը և ամուր սեղմեք պատին



Ինտերիերի օրինակը

Կահույքի երեսպատման տարրեր

Կահույքը վիզուալ շեշտելու համար մշակել ենք նախշապատ վրադիրներ:

Դրանք հեշտ են տեղադրվում, քանի որ սոսնձային հիմքով են պատրաստվում



ներբեռնել նմուշները

Մենեջերի սեղանի վրադիր

Սեղանի դիմային կողմի վրադիր:
Ունի 2 հատված. վարդագույն՝ տարբերանշանով, և բաց մոխրագույն՝ զարդանախշով




Չափսերը՝
1. 79,8×48,3 սմ
2. 76,5×56,7 սմ

Նյութերը՝
պոլիէթիլեն տերեֆտալատ 0,15 սմ

Ապրանքների հանձնման սեղանի վրադիր

Սեղանի դիմային կողմի վրադիր:
Կարող է ունենալ 2 կամ 3 հատված՝ կախված սեղանի չափսից:

Նախընտրելի վրադիրը տեղադրել այնպես, որ այն հայտնվի մենեջերի սեղանի կողքը



Չափսերը՝
1. 44,4×81,7 սմ
2. 45,4×63,3 սմ
3. 44,4×81,7 սմ

Նյութերը՝
պոլիէթիլեն տերեֆտալատ 0,15 սմ

Ապրանքների ստուգման սեղանի վրադիրներ

Ապրանքների ստուգման սեղանի դիմային կողմի վրադիր: Կա և փոքր և մեծ սեղանների համար



Փոքր սեղանի համար չափսերը՝
14,9×76,5 սմ
Մեծ սեղանի համար չափսերը՝
14,9×89,5 սմ


Նյութերը՝
պոլիէթիլեն տերեֆտալատ 0,15 սմ

Տեղեկատվական նյութեր

01 Տեղեկատվություն տեսահսկման վերաբերյալ
02 Պատի տեղեկատվական վահանակներ
03 Սեղանի ցուցանակ ներդիրների համար
04 Հաճախորդի անկյուն

Տեղեկատվական նյութերի հիմնական կազմ

1. Տեղեկատվություն տեսահսկման վերաբերյալ
2. Պատի տեղեկատվական վահանակներ
3. Սեղանի ցուցանակ ներդիրների համար
4. Հաճախորդի անկյուն



Տեղեկատվություն տեսահսկման վերաբերյալ

Հանձնման կետում տեսա-
և լսահսկում իրականացնելու
համար անհրաժեշտ է.

— տեղադրել ցուցանակ
այն մասին, որ ՊՀԿ-ի
տարածքը տեսահսկվում է
— գնորդների համար
ապահովել տվյալների
մշակման քաղաքականության
տեքստի հասանելիություն





Չափս՝ 14,8×21 սմ

Նյութեր՝ թուղթ

ներբեռնել նյութերը

Ինչպես ենք խորհուրդ տալիս աշխատել մակետների և ձևանմուշների հետ՝

1. Ներբեռնեք նյութերը՝ ցուցանակի մակետը և «Տեսա- և աուդիոմոնիթորինգի իրականացման կարգի քաղաքականություն» փաստաթղթի ձևանմուշը

2. Ինքնուրույն լրացրեք դատարկ դաշտերը ձեզ համար ակտուալ տեղեկատվությամբ

3. Կարող եք քաղաքականությունը տեղադրել ստացման կետի տարածքում, ինչպես նաև ամպային պահեստում. այդ դեպքում ցուցանակի վրա խորհուրդ է տրվում ունենալ QR կոդ

Ամպային պահեստում քաղաքականությունը տեղադրելու դեպքում.

1. ավելացրեք քաղաքականության տեքստը ամպային պահեստում

2. բացեք ֆայլի հասանելիությունը հղումով և պատճենեք այն

3. ստեղծեք QR կոդ այս հղման համար: օգտագործեք ցանկացած անվճար ծառայություն

4. Ներբեռնեք QR կոդը և ավելացրեք այն ցուցանակի մակետին՝ ինչպես օրինակում

5. Տպեք ցուցանակի մակետը և տեղադրեք այն սեղանի ցուցանակում

Պատի տեղեկատվական վահանակներ

Տեղեկացնում ենք այցելուներին, որ ստացման կետում գործում են տեսախցիկներ:
Նաեւ հիշեցնում ենք, որ կարևոր է ապրանքները ստուգել տեսախցիկի տակ:




Չափսը՝ 20×20 սմ

Նյութը՝
պոլիէթիլենտերեֆթալատ (PET), 0,15 սմ


ներբեռնել մակետները

Որտեղ տեղադրել ցուցանակները


Ընտրեք տարբերակներից մեկը



Լավագույն տեղակայումը՝ ուղիղ տեսախցիկի տակ



Վարդակի վերևում, հատակից 180 սմ բարձրության վրա: Եթե մալուխը խանգարում է, տեղադրեք տեսախցիկի մյուս կողմում



Եթե տեսախցիկը առաստաղի վրա է, տեղադրեք դրա տակ, հատակից 180 սմ բարձրության վրա:

Սեղանի ցուցանակ

Սա պլաստիկ տակդիր է A5 ձևաչափի ներդիրների համար:

Սեղանի ցուցանակում տեղադրում ենք գնորդների համար կարևոր տեղեկատվություն:

Տակդիրը թափանցիկ է երկու կողմից՝ հնարավոր է միաժամանակ տեղադրել 2 թերթիկ

Չափսը՝ 14,8 × 21 սմ

Նյութը՝
թուղթ

Ներբեռնել մակետը






Որտեղ տեղադրել սեղանի ցուցանակները

Կա մի քանի տարբերակ



Մենեջերի սեղանին: Դրեք ազատ տեղում, որպեսզի սեղանի ցուցանակը չխանգարի գնորդներին




Ապրանքների ստուգման սեղանին

Հաճախորդի անկյուն

Այս ստենդը պարտադիր պետք է տեղադրված լինի հանձնման կետում: Այն նախատեսված է իրավական տեղեկատվության և ՊՀԿ-ից օգտվելու կանոնների ներկայացման համար:

Պատվիրեք սպառողի անկյուն՝ ձեռնարկում հասանելի նմուշներով, կամ ընտրեք նմանատիպ պատրաստի տարբերակ:

Փակցրեք այն ապրանքների ստուգման սեղանի կողքի կամ որևէ այլ պատի վրա



ներբեռնել նմուշները

Ամեն ինչ կստացվի՛

Երբ վերանորոգումն ավարտեք, ուղարկեք հանձնման կետի ակտիվացման հայտը՝ WB ՊՀԿ-ին